# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի <<Չարենցավանի № 6 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի երաժշտության /շաբաթական 17 դասաժամ/, մաթեմատիկայի /շաբաթական 8 դասաժամ/, կերպարվեստի /շաբաթական 17 դասաժամ/, ֆիզիկայի /շաբաթական 20 դասաժամ/, պատմության /շաբաթական 14 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար մասնակիցը տնօրենի կողմից նշանակված աշխատակցին է տրամադրում

1. Դիմում(Ձև 1)՝, մեկ լուսանկար՝ 3×4 չափի,
2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ(դիպլոմ),
3. Անձը հաստատող փոստաթուղթ
4. <<<Հանրակրթության մասին>> ՀՀ Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
5. Ինքնակենսագրություն (Ձև 5)
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում 2023թ. նոյեմբերի 1-ից մինչև 14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը $10^{00}$-ից $15^{00}$-ը, բացի շաբաթ, կիրակի և տոնական օրերից:
Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

***Մրցույթը տեղի կունենա 2023թ նոյեմբերի 17-ին՝ ժամը $14^{30}$-ին, ՀՀ Կոտայքի մարզի <<Չարենցավանի № 6 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում՝ քաղաք Չարենցավան Ռուսովի 7 հասցեում:***

Տեղեկությունների համար զանգահարել (0226) 4-54 -98 հեռախոսահամարով: